



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՑԿՅԱՆՍ
ՊԱՏՎՈ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՈՂԶՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Տիարոյտ

Բարեաց պարգևատու Աստուծոյ ողորմութեամբ, այս տարի լրանում են
ութսուն տարիները Ձեր եկեղեցական ծառայութեանց, նախ իբրև դպիր,
ապա որպէս սարկաւագ և յետայնու բազմաթիւ տարիներ, եկեղեցական
վարչական մարմիններու ժրաջան նուիրեալ գործիչ, որպէս ատենապետ
կամ անդամ թեմական, համայնքային վարչութեանց:

Դուք կը հանդիսանաք բացառիկ անձնաւորութիւն մը՝ թէ՛ որպէս եկե-
ղեցանուէր հաւատաւոր հայորդի, թէ՛ որպէս համազգային մեծ բարերար,
թէ որպէս երկար տասնամեակներ անգուգական նախագահը Հայ Բարեգոր-
ծական Ընդհանուր Միութեան, այժմ ցկեանս պատուոյ նախագահ:

Մեծայարգ Տիար, նախախնամութիւնը Ձեզ շնորհած է բարոյական ա-
մուր նկարագիր, բարի սիրտ ու առաքինի վարք, գործարար մարդու ան-
մասն տաղանդ, ազգի ու Մայր Հայրենիքի իրաւ շահերու պայծառ գի-
տակցութիւն, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ պատմական առա-
քելութեան նկատմամբ անսասան հաւատք:

Անվարան կարելի է վկայել թէ Դուք քսաներորդ դարու բազմաշնորհ
մեծագոյն սփիւռքահայն էք: Ձեր անունը և մեծահամբաւ իրագործումները
յարգանքով ու երախտագիտութեամբ պիտի յիշատակուին հայոց պատմու-
թեան մատենանին մէջ: Ձեր օրհնեալ կեանքը նաև բարոյական յաղթանակն
է մեր ժողովուրդին:

Երջանիկ ենք վկայելու նաև Ձեր առատաձեռն նուիրաբերումները Մայր
Աթոռ Սուրբ Էջմիածնին, որոնց գլուխ-գործոցը կը հանդիսանայ Վեհաբա-
նիս կողքին կառուցուած Գանձատունը՝ Ալեք և Մարի Մանուկեան թանգա-
րանի երկշարկանի շքեղ շինութիւնը, պարծանքը մեր օրերի իրագործում-
ների շարքին:

Ահա այսպիսի փառահեղ վաստակով, իբրև պանծալի զառակ հայ ազգի, Դուք՝ Տիար Ալեք Մանուկեան, կանգնած էք Հայ Եկեղեցւոյ և համայն մեր ժողովուրդի առաջ, եկեղեցական Զեր ծառայութեանց ութսուն տարիներու աւարտին:

Խոր յուզումով և բարձր գնահատանքով կ'ողջունենք այս յիշարժան տարեդարձը և Մեր աղօթքը կ'առաքենք առ Բարձրեալն Աստուած, որ տալաին ապրիք երկար տարիներ՝ խաղաղութեամբ ու բարօրութեամբ և նորանոր բարի գործոց պսակաւորումներով:

Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւեւ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն:

Հարպէ Դ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուա կոնդակս ի 28 Յունուարի
1994 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԽԳ
ի Մայրավանս Արբոյ Էջմիածնի:
Հմր. 2023

